

К-журнал

Учебный журнал

891 99

S-72

1936



ԲԻԻԶԱՆԴ ՏԻԼԿԵՐԵԱՆ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԻԱՐԱՐ)

ՈՐԿՐԱՄՈՒԸ

ԵՒ

ԿԵՂԾ ՏԱՂԱՆԴՆԵՐ



«Պէճ է զգոյ՛ ըլլալ քալելու եւ  
գրելու ժամանակ, որպէսզի ոճ եւ  
գրիչ խելէ առաջ չբալեն»:

ԱՐԻՍՏՈՓԱՆ

891.99

S-72

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ  
ՏՊԱԳՐ. Ա. ԳԱՍԱԳԵԱՆ  
1936

156

-6 NOV 2011

ԲԻԻԶԱՆԴ ՏԻԼԿԷՐԵԱՆ

891.99

Յ-72

ԱԿ

# ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

(ՄԻԱՐԱՐ)

## ՈՐԿՐԱՄՈԼԸ

ԵՒ

## ԿԵՂԾ ՏԱՂԱՆԴՆԵՐ



«Պէժ է զգոյժ բլլայ որպէսզի ոսք էւ  
զրիչ խելէ առաջ չհալեն»:

ԱՐԻՍՏՈՓԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ  
ՏՊԱԳՐ . Ա. ԳԱՍԱՊԵԱՆ  
1936

6173

2 0 2

Ա Ռ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՇԵՐՈՒ

ՎՍԵՄՈՇՈՒՔ

ՏԻՍՐ ԲԱՐՍԵՂ ՊԱՂԸԳՃԵԱՆ

Կասկեղորփիւններու այս առաջին տեսակը՝ որ-  
դիական խանդաղաւանով եւ երախտագէտ զգացումով  
Ձեզի կը ձօնեն: Դո՛ւք, ո՛վ պատուական հայր, Ձեր  
անհուն գրաստութեամբ, մահաւունչ աղէտներէ ցիր ու  
ցանուած հայ բուռն զանգուածներու փրկութեան սա-  
տարող օրհնացիր աջը հանդիսացաք:

Ձեր հմտութեան, չարատեւ եւ անբասիր աշխատու-  
նակութեան եւ առաջնութեան շնորհիւ թիրացաք նշա-  
նակելի հարստութեան մը, որով սարահալած հայ բազ-  
մակարօտ գաղթականութեանց ծոցին մէջ կանգնեցիք  
հաւատքի սանաւներ, մեծագումար նախաձեռնութիւններ  
ընծայաբեւեղով բարեսիրական ձեռնարկներու եւ ազ-  
գոգոյտ հանգանակութեանց: 1926-ի նախազգրական  
տարիներուն՝ մահաւախ երկրաւորէ աղէտահար մեր  
վերածնունդ հայրենի ժողովուրդին հասցնելով Ձեր նիւ-  
րական զոհողութեան քանկագին բաժինը

Անգնահատելի են մանաւանդ՝ Ձեր վարած ազգա-  
յին երկարամեայ պատշոններն ու ծառայութիւնները,  
զորս այնքան խոհականութեամբ, հեռատեսութեամբ եւ  
խանդաղեմ եռանդով կատարեցիք զանազան գաղութ-  
ներու մէջ, արժանանալով Ամեն Տ. Թորգոմ Պատրիարքի  
եւ ուրիշ բնական բարձրաստիճան հոգեւորականներու  
տարփողալից գնահատագիրներուն:

7617-56



Բ.

Եզիպտահայ ժողովուրդը եւ Սուրիահայ զանգուածները անհուն երախտագիտութեամբ Ձեր սիրելի անձը մկրտեցին «Ազգային Բարերար» տիտղոսով, արդարօրէն դասելով Ձեզ շաբը՝ այն գերերջանիկ եւ պանծալի դեմքերուն, որոնք Հայ Յեղին տառապանքի նակասագրական տարիներուն հանդիսացան հրաւազորք փրկիչներ:

Յեղիս միահամուռ ձայնովը կը բարեմաղթեմ որ Ձեր կեանքին մնացորդը՝ ըլլայ աւելի քան երբեք բեղուն երջան մը՝ որպէս զի՝ որքան Ձեր գաղութահայ զաւակներուն՝ նոյնքան մեր լուսաւոյ Հայրենիքի եղբայրներուն արտին մեզ յաւեւ անմահ մնայ Ձեր անունը:

Բ. Տ.



ՀԱՅ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Նորիցանայ խորհուրդը եւ Եւրոպայի զանգուան-  
ները սկսեան նախապատրաստել մեր սիրելի անձը  
Վրեպիկն շնորհալիկ Բաշեանը, սիրտով, ապարտէն  
զուտելով մեզ սաեք՝ առ շնորհամիկ եւ զանձամի  
զեմեան, որով Հայ Մեզին առաջակնի նախա-  
դրական արիմներն հանգրաւելով նաեւագործ փրկիչ-  
մեր

Յեղիս Ժամբաւոյ, Հայեմի՝ եւ բարեմաքիմ որ  
մեր կիանկին մնացողը՝ ըլլայ աւելի քան երեք բն-  
դուն որչան մը՝ որչազի՝ որչան մեր գաղութանայ  
զուակնիրուն՝ Այնքան մեր յուսուող Հայեմիկի եղ-  
բայեմերուն՝ որին մեզ յուրս անման մնայ մեր ա-  
նունք։



ՏԻՄԻ ԲԱՐՍԵՂ, ՊՕԼԸԳՃԵԱՆ

# ՈՐԿՐԱՄՈԼԸ

(Կասակերգութիւն մէկ արար)

## ԳԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

ՄԱՐԳԱՐ . . . . .	Վանստական
ԱՆԺԷԼ . . . . .	Մարգարի կինը
ՄԱՐԹԱ . . . . .	Սպասուհի
ՊՕՂՈՍ . . . . .	Ուկրամուր

(Տեսարանը կը ներկայացնէ գեղեցկօրէն կահաւորուած հիւրասենեակ մը)

## ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

### ՄԱՐԳԱՐ ԵՒ ՄԱՐԹԱ

(Նրբ վարագոյրը կը բացուի, Մարգար աջ կողմի թիկնաթոռի մը մէջ ընկղմած կը ծխէ. նոյն միջոցին հապճեպ ու շփոթած ներս կը մտնէ Մարթա:)

*ՄԱՐԹԱ. (Մարգարը փնտռելով). — Պարո՞ն, ա՞հ, ո՞ւր է պարոնը արդեօք:*

*ՄԱՐԳ. — Ի՞նչ կայ, Մարթա, ի՞նչ կ'ուզես:*

*Մ. (Յուզուած). — Ա՞հ պարոն . . .*

*ՄԱՐԳ. — Ի՞նչ ունիս:*

*Մ. — Ա՞հ կ'ըսեմ, չէ՞ք հասկնար:*

ՄԱՐԳ. — Ա՛հ, ի՞նչ ըսել է, չխօսի՞ս, անպիտա՛ն, աղջիկ:

Մ. — Պարո՛ն, ձեր տղան...

ՄԱՐԳ. — Է՛ր ի՞նչ ըրաւ իմ տղաս:

Մ. — Ո՛հ, սարսափելի է...

ՄԱՐԳ. (Բարկուքեամբ). — Վերջապէս պիտի խօսի՞ս թէ ոչ:

Մ. — Ահաւասիկ. այս առաւօտ կաթնավաճառը երկու լիտր կաթ բերած էր և ձեր տղան...

ՄԱՐԳ. — Թափե՞ց...

Մ. — Ընդհակառակը պարո՛ն, անյագօրէն խըմեց ամանին պառնակութիւնը:

ՄԱՐԳ. — Վա՛յ անօրէն:

Մ. — Ապահովութեան համար, ձեր մահճակալին տակ, ծածուկ տեղ մը պահեր էի:

ՄԱՐԳ. — Անպիտա՛նը:

Մ. — Նոյնիսկ կաթիլ մը չէ ծգած ամանին մէջ:

ՄԱՐԳ. — Լի՛րբը, շո՛ւտ հոս կանչէ զինքը:

Մ. — Ի՞նչ կ'ըսէք, պարոն, ձեր տղան այնքան տխմար չէ որ յանցանք մը գործելէ հտքը ուղէ տունը մնալ. անիկա սովորաբար իր հետքը կը կորսնցնէ ծանրակշիռ մեղք մը գործելէ անմիջապէս հտքը:

ՄԱՐԳ. — Ուրեմն խոհանոց գնա և ուշագիտ հսկէ կէսօրուան ճաշին վրայ:

Մ. — Խոհանոցը հսկողութեան ենթարկելու պէտք չկայ այլեւս... երկու ամիսէ ի վեր արդէն բոլոր ուտելիքները կը պահենք ննջարանին մահճակալներուն տակ կամ հիւրասենեակին թիկնաթոռներուն ներքեւ...

ՄԱՐԳ. — Շատ իմաստուն կարգադրութիւն մը ըրեր էք... հիմա գնա և զիս առանձին ձգէ:

### Տ Ե Ս Ի Լ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

#### ՄԱՐԳԱՐ ԱՌԱՆՁԻՆ ԱՊԱ ԱՆԺԷԼ

ՄԱՐԳԱՐ. — Այս դժբախտ աղջիկն ալ քիչ չի տառապիր մեր շատակերին անառակութիւններէն... չեմ գիտեր ինչպէ՞ս, ի՞նչ կերպով վարուիմ այդ գազանին հետ որպէս զի հրաժարի իր զագիր ունակութենէն... Սողոմոնի իմաստուն խրատները և Աւետարանին պատուէրները ծայրէ ի ծայր կարգացի, բայց օգուտ մը չըրաւ, ամբողջ անտառ մը փայտ կոտրեցի կունակին վրայ, դարձեալ օգուտ չըրաւ, ի վերջոյ զինքը սարսափեցնելու համար ըսի թէ Սատանաները իր մահէն հտքը հոգին գժօխք պիտի փոխադրեն և բոցավառ խարոյկներու վրայ պիտի այրեն, եթէ չձգէ իր գարշելի որկրամոլութիւնը, բայց այս աղգարարութեան վրայ ծիծաղեցաւ անառակը...

### Տ Ե Ս Ի Լ Ե Ր Ր Ո Ր Դ

#### ՄԱՐԳԱՐ ԵՒ ԱՆԺԷԼ

ԱՆԺԷԼ (Բարկուքեամբ առ Մարգար). — Օ՛հ, իսկապէս այս անփութութիւնդ զիս պիտի կատղեցնէ... Ո՛հ, որքա՛ն տաղտկալի է կնոջ մը համար թոււամորթ ամուսին մը ունենալը...

ՄԱՐԳԱՐ. — Ա՛յնքան զարհուրելի գլխացաւութիւն է ամուսնի մը համար կամակոր կին մը ունենալը...

ԱՆԺ. — Լուէ՛, լուէ՛, հայր պիտի ըլլաս չկրցար ու է կերպով կրթել անառակ զաւակդ, որ տան մէջ ահաւոր մղձաւանջ մը դարձած է գլխուս:

ՄԱՐԳ. — Հիմա կը հասկնամ որ տրամադրութիւնդ դարձեալ զիս բարկացնել է:

Անժ. — Բայց կը զարմանամ թէ լըրճուկ տղան ինչպէ՞ս չի հիւանդանար :

ՄԱՐԳ. — Տան ծակուծուկը խառնելէն, խուս գարկելէն հիւանդանալու ժամանակ չունենար... յետոյ չի՞ բաւեր ամէն օր, ամէն ժամ մեզ հիւանդացընելը, քառասուն աստիճանի ջերմութիւն մեր ցաւատանջ գլխուն տալը, կ'ուզես որ ամէն ալ հիւանդանայ...

Անժ. — Ի՞նչ կ'ըսես, արգեօք բժշկի մը ցուցընե՞նք զինքը :

ՄԱՐԳ. — Ախորժափ կը բանալու համար :

Անժ. — Մասամբ մը գոնէ իր շատակերութեան առաջքը առնելու համար :

ՄԱՐԳ. — Ափսո՛ս, բժիշկները դեռ այդ մասնագիտութեան չեն տիրացած, բայց կայ ուրիշ միջոց մը : որ թէպէտե քիչ մը վտանգաւոր է, բայց արմատական բուժում յառաջ պիտի բերէ...

Անժ. — Այսինքն...

ՄԱՐԳ. — Խիստ վտանգաւոր և ահաւոր միջոց մը...

Անժ. — Շո՛ւտ յայտնէ :

ՄԱՐԳ. — Մահացու և միւսժամանակ ճակատագրական...

Անժ. — Բայց չի յայտնե՞ս :

ՄԱՐԳ. — Ահաւասիկ. պէտք է մասնագէտ բժիշկ մը կանչենք և իր ստամոքսը գործողութեան ենթարկենք :

Անժ. — Պզտիկցնելու համար :

ՄԱՐԳ. — Այո՛ :

Անժ. — Այդ միջոցը հաւանաբար կարող է մահացու ըլլալ. իր որկրամոլութիւնը բուժելու տեղ թեւեւ իր կեանքը վտանգենք, ուստի աւելի խոհական և նուազ վտանգաւոր միջոց մը գտնելու է :

ՄԱՐԳ. — Այդ պարագային զինքը ծեծելէ և միսերը կտրելէ զատ ուրիշ միջոց չկայ :

Անժ. — Գիտե՞ս ինչ կը խորհիմ, օր մը այդ գաւազանդ կտորելու տեղ, տղուդ ոսկորներէն մէկը անպայման պիտի կտորես :

ՄԱՐԳ. — Այդ կողմէն անհոգ եղիւր, անոր ոսկորները երկաթէն աւելի ամուր, զիմացկուն են :

Անժ. — Քեզի խորհուրդ կուտամ որ միշտ իր յետոյքին զարնես. կը յիշես հարկաւ, անցեալ օրուան ապտակէդ քիչ մնաց ձախ աչքը դուրս պիտի ցատքէր :

ՄԱՐԳ. — Արդէն ի՞նչ օգուտ կը սպասես այդ աւանակէն... ինչ որ է, քալէ, աճապարէ քիչ մը, պատարագը սկսած ըլլալու է :

Անժ. — Ո՛վ գիտէ թերեւս վերջացած ըլլայ :

ՄԱՐԳ. — Ուրեմն շտապէ՛, ի՞նչ կեցեր ես. ամէն անգամ գլխարկդ գլուխդ գնելու համար ժամ մը կ'առնես :

(Միասին փախի մը փայլ յառաջանալէ ետքը). — Ի՞նչ պիտի ըսէի, այո՛, չըլլա՞յ որ մէջտեղը ուտելիք բան մը ձգած ըլլաս :

Անժ. — Ամէն բան կղպանքի տակ է, բայց ի՞նչ օգուտ, վերադարձին ինչ որ գտնանք փառք տանք Աստուծոյ : (Դուրս կ'ելլեն) :

### Տ Ե Ս Ի Լ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

#### ՄԱՐԹԱ ԱՊՍ ՊՕՂՈՍ

ՄԱՐԹԱ. — Աստուած իմ, այս ի՞նչ գժրազոհութիւն է. (օխորած) ի՞նչ պիտի ընեմ հիմա : Որկրամոլ տղան կէսօրուան ճաշին համար խորոված հաւը ամանէն տարեր է : Օ՛, անիծեալ, զուելի արարած...

ՊՕՂՈՍ . — Դարձեա՞լ զիս կ'անիծես , Մարթա՞ :

Մ . — Եկա՞ր , աներե՛ս , սեւերե՛ս տղայ . կը խըն՝  
դաս , այնպէս չէ՞ , անա՛սուն . . .

ՊՕՂ . — Բայց ինչո՞ւ կը յուզուիս , ինչո՞ւ այդ  
պէս կը յանդիմանես զիս :

Մ . — Ըսէ՛ , որկրամո՞լ , շուտ խոստովանէ մեղքդ :

ՊՕՂ . — Ես մեղք չեմ գործած , ի՞նչ կ'ուզես որ  
խոստովանիմ :

Մ . — Խօսէ՛ , անբա՛ն , յայտնէ՛ գործած յան-  
ցանքդ :

ՊՕՂ . — Եթէ չի հանդարտիս և հանդիստ տրա-  
մադրութեամբ զիս մտիկ չընես , բան մըն ալ չեմ  
խոստովանիր :

Մ . — Ո՛հ , պիտի խենթենամ . . .

ՊՕՂ . — Մի՛ այդչափ առաջ վազեր , անուշիկս ,  
յետոյ իրաւէն կը խենթենաս . ես շատ աղէկ գիտեմ  
յուզումիդ դրդապատճառը , մօրս մահճակալին տակ  
պահուած խնձորներն ու տանձերը ուտելու համար  
կը բարկանաս , այնպէս չէ՞ :

Մ . — Աստուա՛ծ , տէրս զանոնք բերած էր ճա-  
չէն վերջը սեղան բերելու համար , ատո՞նք ալ կե-  
րար , անպի՛տան :

ՊՕՂ . — Թերեւս խոհանոցի մեծ պահարանին  
գլորոցին մէջ պահած անուշեղէններուն համար բորբո-  
քած ես :

Մ . — Ինչպէ՞ս , անո՞նք ալ կերար :

ՊՕՂ . — Հիմա՞ , երկու օր կ'ըլլայ ուտելս , կը  
զարմանամ որ չես անդրադարձեր , բայց ապահովա-  
բար քեզի ցաւ ու վիշտ օրատճառող բանը գուցէ ա-  
մանին մէջ պահ դրուած խորոված հաւն է որ այս  
կէսօրուան համար պատրաստեր էիր , բայց անուշիկ  
Մարթաս , դուն այսքան բարեսիրտ հոգի մը ունիս ,

որ այս արարքս կը յուսամ որ հօրս չպիտի իմա-  
ցընես :

Մ . — Վայրենի՛ , լղրճո՛ւկ , համբերէ որ հայրդ  
գայ իր գաւազանով սատկած հաւու պէս մխտնող ու  
ոսկորներդ կակուզցնէ :

ՊՕՂ . (Աղաչակամ) . — Մա՛րթա , կը պաղատիմ  
չըլլայ որ հօրս բան մը յայտնես :

Մ . — Ինձի պաղատելով չես կրնար փրկուիլ ,  
պատրաստուէ հայրդ գալուն , ոտքերուն առջև իյ-  
նալու :

ՊՕՂ . — Անիկա անգութ է Մարթա , զիս չի նե-  
րեր . . . գէթ ըսէ որ կատուն ամանէն տարած է հաւը :

Մ . — Որքան անմիտ ես , կատուն ինչ գործ ու-  
նի այս տան մէջ . ենթադրենք որ կատուն տարաւ  
հաւը , բայց խնձորներուն և անուշեղէններուն հա-  
մար , ո՞վ յանցաւոր բռնելու է :

ՊՕՂ . — Դարձեալ կատուն :

Մ . — Տխմա՛ր . կատուն խնձոր կ'ուտէ՞ :

ՊՕՂ . — Իրաւունք ունիս , բայց ուրիշ միջոց մը  
խորհելու է , ուրիշ հնարք մը գտնելու է :

Մ . (Մեղմ) . — Ինձի մտիկ ըրէ . . .

ՊՕՂ . — Ապրի՛ս Մարթա , կ'երեւայ թէ զիս ա-  
ղատելու բանաւոր միջոց մը պիտի առաջարկես :

Մ . (Լուրջ) . — Սենեակիս պահարանին մէջ խո-  
րոված շագանակ պահեր էի , եթէ ըսես ինձի ո՞վ կե-  
րաւ . . .

ՊՕՂ . — Լուռ կեցիր , Աստուածդ սիրես , շաբաթ  
մը առաջ պատահած բաներու վրայ մի՛ խօսիր :

Մ . — Քեզի կը հարցնեմ ո՞վ կերաւ :

ՊՕՂ . — Ալ գեօք զիս ձեռնելու մի՞տք ունիս :

Մ . — Բնաւ երբեք :

ՊՕՂ . — Ես կերայ , անուշիկս . . . բայց Մարթա

խելացի խորհուրդ մը ըրէ՝ որպէս զի հօրս և մօրս յարձակոյթներէն աղատիմ :

Մ. — Լաւագոյն և խոհական միջոցը՝ համարձակօրէն խոստովանիլն է :

ՊՕՂ. — Սոստովանիլ... Աստուած չընէ, հայրս ալ դէն խոստովանութեանս կը սպասէ որպէս զի իր օրհնեալ գաւազանը կռնակիս վրայ հալեցնէ :

Մ. — Ամէն պարագայի մէջ, քու փրկութեանդ համար, ես ինքզինքս չեմ վտանգեր. մօրդ յանդիմանութիւններէն և հօրդ գաւազանի հարուածներէն պրծելու համար միջոց մը խօրհէ (Դուրս կ'ելլի) :

### Տ Ե Ս Ի Լ Շ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ ՊՕՂՈՍ ԱՌԱՆՁԻՆ

ՊՕՂՈՍ. — Երանի թէ՛ հաւը ամանին մէջ հանգիստ ձգէի. ա՛հ, ա՛հ, կ'երեւակայեմ հօրս բարկութիւնը, կատաղութենէն խոշորցած աչքերը, պոստած յօնքերը, ճակտին սոսկատեսիլ կ'ընծիւնները, քստմտած մագերն ու տնկուած ականջները, իր դժօխային չարաշուք դէմքը, մանաւանդ երկաթէն ամուր իր գաւազանը. երանի թէ՛ հաւը ամանին մէջ հանգիստ ձգէի, ի՞նչ կերպով հիմա, այս գարշելի արարքս պիտի արգարացնեմ հօրս առջև... (Յանդուգն) բայց կը զարմանամ այս աստիճան շփոթելուս վրայ, կարծես թէ առաջին անգամ պատահած ըլլար... ի՞նչ հաւեր, ի՞նչ հնդկահաւեր, ի՞նչ սագեր և բադեր, ի՞նչ անուշեղէններ, համադամ ճաշեր կարկանդակներ, խորոված ճագարներ և տատրակներ կոկորդած եմ և աշխարհ չէ կործանած. նիհար, սմսեղուկ հաւ մը ուտելով երկրէս քար մը անգամ չի շարժիր... շատ շատ կ'ըսեմ թէ անօթի էի կերայ, զիս չպիտի կախէ,

գաւազանով քիչ մը պիտի հալածէ, պիտի յանդիմանէ, պիտի սպառնայ, յետոյ հանգստաւէտ թիկնաթոռի մը մէջ պիտի բազմի և ծխէ, որպէսզի իր ոտքի ելած ջիւղերը հանդարտին և թունդ ելած սիրտը հանգըստանայ: Առայժմ Մարթան սենեակները մաքրելու պաշտօնին գլուխն է. երթամ խոհանոց, թերեւս պահարանին ներսը կամ դուրսը, վրան կամ տակը, վերջապէս բոլոր անկիւններն ու խորշերը աչքէ անցնեմ, դուցէ ուտելու բան մը կը գտնեմ: (Դուրս կ'ելլի):

### Տ Ե Ս Ի Լ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ ՄԱՐԹԱ ԱՌԱՆՁԻՆ

ՄԱՐԹԱ. — Եթէ տէրս իմանայ հաւուն անյատանալը, անկասկած պիտի բորբոքի և հաւանաբար զիս ալ խստօրէն պիտի յանդիմանէ, պէտք եղած զուշութիւնը գործադրած չըլլալուս համար: Վարժարանին տեսչութենէն շարաթը երկու, երեք անգամ բողոքի և դժգոհութեան նամակներ կ'ստանանք. որկրամուտ տղան գպրոցին մէջ անգամ կատարեալ մղձաւանջ գարձած է իր գասընկերներուն. աներեսաբար կը յափշտակէ անոնց ուտելիքը և այս կերպով պատճառ կ'ըլլայ կռուի և յուզիչ միջադէպերու: Եթէ հայրը վարժարանի հոգաբարձութեան ատենապետը չըլլար, ըսկէ մը նոյնիսկ չպիտի հանդուրժեր տեսչութիւնը գպրոցին մէջ պահել: Երէկ, դարձեալ նամակ մը ստացանք տեսուչէն, կը գրէ որ, աներես տղան, քանի մը աղքատ ուսանողներու կէսօրուան ճաշի ծրարները բացած և պարուճակութիւնը կերած է. տէրս ալ թէպէտե իր տղուն որկրամուտութեան փոխարժէք գումարը զրկեց տեսչութեան, բայց սաստիկ ջղայնութենէն ամբողջ գիշերը անքուն անցուց. (Պը-

ճակի մը կոտորուելուն ձայնը կը լսուի) Տէր իմ Աստուած . այս ինչ է , դարձեալ պնակ զոտրած պիտի ըլլայ թշուառական տղան . երթամ տեսնեմ : (Դուրս կ'ելի) :

### Տ Ե Ս Ի Լ Ե Օ Յ Ն Ե Ր Ո Ր Դ Մ Ա Ր Գ Ս Ր Ե Ի Ա Ն Ժ Է Լ

Մ Ա Ր Գ Ս Ր . — Մեծ ամօթ եղաւ , շիտակը պատարազը լմնայու վրայ էր , մենք ալ ներս մտանք :

Ա Ն Ժ Է Լ . — Որքան պատուախնդիր ես . չտեսա՞ր , մեր տաներէց քահանան անգամ նոր եկեղեցի կ'երթար :

Մ Ա Ր Գ . — Լաւ յիշեցիր , Անժէյ , ամբողջ գաղուածին մէջ չորս քահանայ կայ , միայն երկուքը եկեղեցի եկեր էին . կ'երեւայ թէ Առաջնորդ Սրբազանին աչքը չտեսնար ասիկա :

Ա Ն Ժ . — Ինչպէս կ'ուզես որ տեսնայ , երբ տարին հազիւ երկու անգամ եկեղեցի կ'այցելէ :

Մ Ա Ր Թ Ա . (Ներսէն) . — Զգէ՛ կ'ըսեմ , ո՛չ չպիտի ուտես :

Պ Օ Ղ . (Ներսէն) . — Մարթա՛ , ազատ ձգէ զիս , ապա թէ ոչ ձեռքդ կը խածնեմ :

Ա Ն Ժ . — Կարծեմ հոս կուզան :

Մ Ա Ր Գ . — Անժէյ , դուրս գնա վայրկեան մը , ես այս գրան ետեւ պիտի պահուիմ տեսնենք կրկին ինչ բան է իր ուտել փափաքածը : (Կը պահուի) :

### Տ Ե Ս Ի Լ Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ Ն Ո Յ Ն Ք . Պ Օ Ղ Ո Ս Ե Ի Մ Ա Ր Թ Ա

Մ Ա Ր Թ Ա . (Պօղոսի ձեռքէն փախելով ապուխտի կտորը) — Պօղոս , ի սէր Աստուծոյ թող տուր հայրդ աստիկ պիտի բարկանայ եթէ ուտես :

Պ Օ Ղ . — Թող տամ՝ որպէս զի հայրս ուտէ , այնպէս չէ՞ :

Մ Ա Ր Գ . (Մեկուսի) . — Վա՛յ լակոտ :

Պ Օ Ղ . — Երեք օրէ ի վեր կը փնտուէի ես ասիկա :

Մ . — Տեղը գիր , կ'աղաչեմ , հայրդ պիտի ծեծէ քեզի :

Պ Օ Ղ . — Արդէն հաւը ուտելուս համար ապահով եմ որ զիս պիտի ծեծէ , գոնէ այս կերպով ապուխտն ալ կ'ուտեմ , որպէս զի ասոր համար զատ ծեծ չուտեմ :

Մ Ա Ր Գ . (Մեկուսի) . — Ո՞ր հաւը կերեր է արդեօք :

Մ . — Ինծի տուր կ'ըսեմ ապուխտը :

Պ Օ Ղ . — Ի զուր տեղը քնքոյշ սիրտդ մի յուզեր :

Մ . — Եթէ ինծի վերադարձնես . . .

Պ Օ Ղ . — Այո՛ , խօ է տատրակս :

Մ . — Հօրդ կ'ըսեմ թէ հաւը կատուն կերաւ :

Մ Ա Ր Գ . (Մեկուսի) . Անամօթ աղջիկ :

Պ Օ Ղ . — Մարթա , հայրս ինձմէ զատ ուրիշ կատու չի ճանչնար այս տան մէջ . ունտի այդ առաջադրութեամբդ զիս չես կրնար փրկել իր գաւազանէն :

Մ . — Քանի որ չես հնազանդիր , ես ալ ամէն բան համարձակօրէն պիտի յայտնեմ իրեն :

Պ Օ Ղ . — Ազատ ես գիտցածդ պատմելու իրեն :

Մ . — Յիշէ՛ սակայն գաւազանի զօրաւ որ հարուածները զորս պիտի ուտես կռնակիդ :

Պ Օ Ղ . — Արդէն , Աստուած բերանը շնորհած է մարդուն , համարամ և քաղցր ուտելիքներ ճաշակելու համար , իսկ կռնակն ալ գաւազանի դառն ու լեզի հարուածներ :

Մ Ա Ր Գ . (Մեկուսի) . — Փիլիսոփայ և ուշիմ տըղայ մը ունիմ եղեր :

Մ . — Գիտե՞ս Պօղոս , որքա՞ն կը յուզուի ու կը

փղձկի սիրտս, երբ հօրդ գաւազանի անգութ և անխնայ հարուածներուն տակ, ցաւակոծ ձայնդ և լաւազին ռմեղաններդ կը լսեմ:

ՊՕՂ. — Խե՛նթ աղջիկ, դուն իրա՞ւ կը կարծես այդ լացս, ես այդ միջոցին յատկապէս սեղայ կը կանչեմ, որպէսզի հայրս քանի մը գաւազանի հարուած պակաս զարնէ:

ՄԱՐԳ. (Մեկուտի). — Վայ սատանայի ձագ, երթամ կամաց մը ներսէն գաւազանս բերեմ:

Մ. — Պօղոս, ինձի մտիկ ըրէ, եթէ ապուխտը ինձի վերագարծնես, քեզի անուշ բան մը պիտի տամ:

ՊՕՂ. — Պաշիկ մը, այնպէս չէ:

Մ. — Աւելի անուշ բան մը:

ՊՕՂ. (Մեկուտի). — Պաշիկէն աւելի անուշ ի՞նչ բան կայ աշխարհի վրայ. (Բարձր) Ո՞ւր պահած ես այդ անուշ բանը:

Մ. — Սենեակիս արկղին մէջ:

ՊՕՂ. — Վա՛յ, մինչև հիմա չէի գիտեր արկղերուդ մէջ անուշ բաներ պահելդ. երթա՛մ, տեսնեմ. (Ներս կը վազի):

Մ. — Ո՛հ, ինչո՞ւ ըսի, ո՛րքան անխոհեմ գործ տեսայ, երթամ ետեւէն, չըլլայ թէ արկղիս պարունակութիւնը քրքրելով սիրային նամակներս ձեռք անցնէ. (Դուրս կ'ելի):

### Տ Ե Ս Ի Լ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

#### ՄԱՐԳԱՐ ԵՒ ԱՆԺԷԼ

ՄԱՐԳԱՐ (Խոռո բիր մը բռնած). — Մա՛րդ, դուն փախցուցի՞ր, կ'երեւայ թէ այդ հաստ փայտով տղադ այսօր մեռցնելու միտք ունիս. գաւազանդ ինչո՞ւ չես առներ:

ՄԱՐԳ. — Քիչ առաջ չի լսեցի՞ր, գաւազանիս հարուածները տղուդ կոնակը չեն ցաւցներ եղեր:

ԱՆԺ. — Ուրեմն, այս փայտովդ տղուդ ողնայարը երկուքի կը բաժնես:

ՄԱՐԳ. — Ես ալ այն մտաւախութիւնը ունիմ, թէ տղուդ ողնայարը այս փայտը երկուքի կը բաժնէ. բայց ո՞ւր գնաց այս լիւրը:

ԱՆԺ. — Չըլլայ թէ խոհանոց՝ հաւը ուտելու գացած ըլլայ:

ՄԱՐԳ. — Հաւը, մեր եկեղեցի երթալէն առաջ, ամանէն յարութիւն առեր է:

ԱՆԺ. — Չեմ հասկնար այդ լեզուդ:

ՄԱՐԳ. — (Յաճ առ Աճժիկ) Հաւը տղուդ ստամոքսին մէջ խոր քուն մտած է:

ԱՆԺ. (Ահաբեկ). — Ինչպէ՞ս, հաւը կերա՞ւ ըսել կ'ուզես:

ՄԱՐԳ. — Հիմակ ալ ապուխտը կը պատրաստուի ուտելու: Աստուած չընէ, եթէ օր մը տանը մէջ ուտելու բան չգտնէ, անկասկած մեզ ալ պիտի ուտէ:

ԱՆԺ. — Ողջ կամ վախճանած ազգականներուս մէջ, ասոր նման որկրամուլ ծնունդ մը չէ եղած...

ՄԱՐԳ. — Այսինքն, ի՞նչ ըսել կ'ուզես:

ԱՆԺ. — Ինչ ըսել պիտի ուզեմ, մեր տղուն որկրամուլ ծնելուն պատճառը գունես:

ՄԱՐԳ. — Ե՞ս եմ:

ԱՆԺ. — Հայրդ կամ մայրդ, կամ մեծ հայրդ, կամ մեծ մայրդ և կամ լուսահօգի ազգականներէդ բարեձաղիկ մը որկրամուլ եղած ըլլայ և այդ չարաղէտ ախտը կերպով մը քեզի փոխանցած ըլլալով...

ՄԱՐԳ. — Կանգ առ հոտ շատ առաջ կը վազես կոր, այդ լակոտին անպիտան ունակութեան պատճառը դուն ես:

ԱՆԺ. — Ե՞ս եմ:

76/7-58



ՄԱՐԳ. — Քու մայրական թերութիւններդ են որ այդ լղրճուկը ծայրայեղ շատակերութեան վարժեցուցին:

ԱՆԺ. — Այդ թերութիւնները անունն չունին:

ՄԱՐԳ. — Ինչպէս թէ չունին, տղադ երկու տարեկան էր, սկսար ամէն տեսակ անուշեղէն, շաքարեղէն, մրգեղէն, մսեղէն բաներ շուտով և երբեմն նոյնիսկ բռնի բերանը դնել ամէն ժամ աւելորդ ծախսեր կ'ընէիր այդ աւանակին ստամոքսին համար, անոր լացը դադրեցնելու համար սովորութիւն ըրած էիր, ինչպէս կը յիշեմ, շաքարի և շոքոլայի տուփեր դնել անոր գիրկը... բայց այս խօսքերը ընելու ժամանակը չէ հիմա:

ԱՆԺ. — Եթէ խելացի հայր մը ըլլայիր, զայն ամէն կերպով չափաւորութեան պիտի մղէիր, դուն զայն ծեծելով, հարուածելով աւելի մղում տուիր իր ունակութեան. (ոտի ձայնը կը լսուի) Լուռ կեցիր, Մարթան և տղադ կարծեմ հոս կուգան:

ՄԱՐԳ. — Դուն դարձեալ ներս քաշուէ, տեսնենք որկրամօլը դեռ ինչե՞ր պիտի խոստովանի: (կը պահուի):

### Տ Ե Ս Ի Լ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ

#### ՆՈՅՆՔ, ՄԱՐԹԱ ԵՒ ՊՕՂՈՍ

ՊՕՂՈՍ. — Ո՛չ, ո՛չ, չեմ տար, կարող ես ամէն բան յայտնել հօրս:

ՄԱՐԹԱ. — Ապուխտը ինծի տուր անուշէն ետքը ապուխտ ուտելը կը մնասէ ստամոքսին:

ՊՕՂ. — Շատ ճիշդ խօսեցար, հօրս ստամոքսին կը մնասէ, բայց իմ...:

Մ. (տխուր). — Ինծի տուր կ'ըսեմ, հիմա բոլոր ուժովս կը պոռամ:

ՊՕՂ. — Պոռա՛, ինչո՞ւ կեցեր ես, այսինքն պոռալով ոչ ինծի կը մնասես. ոչ ալ դուն բան մը կը շահիս:

ՄԱՐԳ. (Մեկուսի). — Լիրբը այնպէ՛ս ախորժակով կ'ուտէ:

ՊՕՂ. — Կը յիշե՞ս Մարթա, անցեալ կիրակի առաւօտ, հարս մեծկակ ձմերուկ մը բերած էր:

Մ. — Ատով ի՞նչ ըսել կ'ուզես:

ՊՕՂ. — Մտիկ ըրէ որ հասկնաս, ի՞նչ ըսել ուզելս, կամաց մը խոհանոց մտայ, ակնթարթի չը մէջ հացի դանա՛ով շերտեցի կերայ... խեղճ հայրս ալ միամտութիւնը ո՛նեցաւ հաւատաւու թէ ձմերուկը պտղավաճառին քով մոռցաւ:

ՄԱՐԳ. (Մեկուսի). — Վա՛յ ապիրատ խաբերայ:

ՊՕՂ. — Երէկ կէս գիշերին, ամէնքդ խոր քունի մէջ կը խռկայիք, անկողնիս մէջ չորս ժամէ ի վեր չէի կրնար քնանալ. կը յիշէի հօրս համար շուկայէն մօրս գնած ձերմակ պանիրը, զոր թուղթին մէջ փաթեթած խոհանոցի սեղանին դարակին մէջ պահած էր:

Մ. — Ապահով եմ որ անիկա ալ կերար:

ՊՕՂ. — Չէ պիտի ձգէի որ հայրս ուտէր:

ՄԱՐԳ. (Մեկուսի). — Անաստուա՛ծ, անօրէն:

Մ. — Տէրս և տիկինս հիմա կուգան, ես կ'երթամ ճաշասեղանը պատրաստելու:

ՊՕՂ. — Շատ լաւ կ'ընես... Խեղճ աղջիկը կը կարծէ թէ ճաշ կայ սեղան բերելու համար:

ՄԱՐԳ. (Մեկուսի). — Կ'երեւայ թէ կէսօրուան համար ուտելու բան չէ ձգած թշուառականը:

ՊՕՂ. (Մեկուսի) — Ուրեմն ծնողքս չեկած, այս սենեակն ալ ուշադրութեամբ խուզարկելու է. սովորաբար մայրս և մեր բարեձաղիկ սպասուհին բոլոր համազամ ուտելիքներն ու անուշեղէնները ինձմէ ծածուկ այս սենեակին թիկնաթոռներուն տակ կամ

այս պահարանին վրայ կը պահեն... Ասկէ երկու շաբաթ առաջ մահճակալին տակէն պնակ մը լեցուն կարկանդակ գտայ. մայրս ճարահատ այդ տեղը յարմար գտեր էր, այն վստահութեամբ որ ես երբէք չպիտի անգրադառնամ ատոր... Ինչ որ է, ամէն բանէ առաջ աթոռի մը վրայ ելլեմ և այս պահարանը խուզարկեմ (աթոռին վրայ կը բարձրանայ):

**ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐԴ**

**ՊՕՂՈՍ, ՄԱՐԳԱՐ, ԱՆԺԷԼ ԱՊՍ ՄԱՐԹԱ**

**ԱՆԺԷԼ (Յած առ Մարգար).** — Ամանով անուշ դրած եմ պահարանին վրայ, ուշագրութիւն ըրէ, չըլլայ որ ստէ:

**ՄԱՐԳ.** — Ամբողջ ուշագրութիւնս իր վրայ կեդրոնացուցած եմ. որքան ես հոս եմ, անուշին հոտը անգամ չի կրնար առնել:

**ՊՕՂ.** (Խանդավառ). — Օ՛, գտա՛յ, գտա՛յ, վերջապէս գտայ (Ամանով անուշը ձեռքին մէջ բռնած) խնձորի անուշ է եղեր. հայրս չեկած՝ վայրկեանապէս այս ալ ուտելու է:

**ՄԱՐԳ.** (Բարձր). — Վա՛ր իջիր աներես, անաս մօթ...:

**ՊՕՂ.** — Ա՛հ, (Ահաբեկ՝ թող կուսայ ամանը ձեռքէն, որ կը կոտրի եւ ինքն ալ վար կը գլորի արուէն եւ ցաւագին անդալակներ կ'արձակէ) Օ՛, օ՛, օ՛...:

**ՄԱՐԳ.** (Պաշտօնով հարուածելով անխնայ). — Խայտառակ, ա՛ն քեզի կարկանդակ, ա՛ն քեզի հաւ, ա՛ն քեզի ապուխտ...:

**ՊՕՂ.** — Օ՛, օ՛, ոտքս...:

**ԱՆԺ.** — Կեցի՛ր, վերջ տուր գաւազանիդ, կարծեմ տղուն ոտքը կոտրեցիր:

**ՄԱՐԳ.** — Ա՛ն քեզի ձմերուկ, ա՛ն քեզի խնձոր: **ՊՕՂ.** — Ո՛հ, օ՛հ, ոտքս...:

**ԱՆԺ.** — Աստուած իմ. ոտքը կոտրեր է, օ՛հ, պիտի մարիմ, օգնութի՛ւն (Կ'իյնայ քիկնարուին մէջ): **ՄԱՐԹԱ (Շփոթած).** — Ի՞նչ կայ, ի՞նչ պատահեցաւ. ի՞նչ ունի տիկինս:

**ՄԱՐԳ.** — Մարթա՛, շո՛ւտ գնա ներսէն սրուակը և գաւաթ մը ջուր բեր:

**Մ.** (Կը բերէ: Մարգար կը մօտեցնէ սրուակը Անժիի քիկին):

**ԱՆԺ.** (Սքալիելով). — Տէր իմ Աստուած, արդեօք բա՛ն մը պատահեցաւ իրեն, Մարթա, կ'աղաչեմ, յանդուգն սիրտ մը ունիս դուն. ուշագիր քննէ տղուս ոտքերը. տե՛ս թէ օ՞րն է կոտրածը:

**Մ.** (Քննելով Պօղոսի ոտքերը, ցած առ Պօղոս). — Խաբեբայ բան մը չունիս դուն:

**ՊՕՂ.** (Յած առ Մարթա). — Ըսէ՛ թէ ձախ ոտքս կոտրած է:

**Մ.** (Յած) Ստասո՛ս...:

**ՊՕՂ.** — Ո՛հ, չես խզար Մարթա, կ'ուզես որ հայրս կրկի՞ն հարուածէ գիս:

**Մ.** (Անժիին). — Տիկին, թէպէտե որոշ չեմ գիտեր կոտրելուն վրայ, բայց իր ցաւագին աղաղակներէն պէտք է եզրակացնել թէ կոտրած ոսկոր մը կայ իր մարմնոյն ու է է մէկ մասին մէջ:

**ՊՕՂ.** — Ո՛հ, օ՛հ:

**ԱՆԺ.** (Գեկելով) — Մի՛ լար, թանկագին զաւակս, եկուր գրկեմ քեզի:

**ՊՕՂ.** — Ես անուշ կ'ուզեմ:

**ՄԱՐԳ.** — Վա՛յ...:


**Մ.** (Բարձր). — Որկրամո՛լը:

# ԿԵՂԾ ՏԱՂԱՆԴՆԵՐ

(Կասակերգութիւն մէկ արար)



## ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ



ՊԵՐՃ	ԼԵՒՈՆ
ՍԻՄՈՆ	ԶԱՐԵՀ
ՎԱՀԱՆ	ԼՈՒՍԻ

(Տեսարանը կը ներկայացնէ շեղարեւոյ կահաւորուած հիւրասենեակ մը, Պերճի օտար մէջ)

## Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Ջ Ի Ն

### ՊԵՐՃ ԱՌԱՋԻՆ

(Վարագոյրը բացուելուն պէս, Պերճը կը բողբոջուի գրասեղանը եւ բարձրաձայն կը կարդայ արձակ փերսուած մը)

ՊԵՐՃ. — «Աստուծո՛ւ . . . գու՛ք ազամանդակու ուղերն էք միտապատ երկնքին, լուսավառ ջահերը երազատես բանաստեղծներուն՝ որոնք ձեր ոսկի շողերուն կը փարին կ'յսի մը գեղը երգելու համար» :

Առտուընէ ի վեր կը կարգամ այս սիրուն քերթուածը և չեմ ձանձրանար . . . հաւատացէք կէօթէ մը, Շէյքսպիր մը շարաթներով պիտի չարչարէին իրենց միտքը այս վսեմ արձակը շարագրելու համար . բայց գիտէ՞ք թէ ես որքան ժամանակի մէջ թուղթին յանձնեցի զայն, հազիւ հինգ վայրկեանի մէջ երբ . . . հանրակառքով տուն կը վերադառնայի : Ճամբուն վը-

բայ հանդիպած բոլոր բարեկամներուս և ծանօթներուս կարգացի, ամէնքն ալ խորապէս հիացան և թելադրեցին որ Փարիզ՝ «Անահիտ»ի խմբագրութեան շրկեմ վայն:

### Տ Ե Ս Ի Լ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

#### ՆՈՅՆ ԵՒ ՍԻՄՈՆ

ՍԻՄՈՆ (Ներս կը մտնէ խանդավառ). — Բարե՛ւ Պերճ:

Պերճ. — Օ՛, բարի եկար Սիմոն, շիտակը խօսելով ես ալ քեզ տեսնելու անհամբեր փափաք մը ունէի:

Ս. — Անպայման նոր քերթուած մը շարագրած պիտի լլլաս:

Պ. — Չես սխալած... բայց նախ ըսէ ինձի ուրկէ՞ կուգաս:

Ս. — Ակումբէն... քանի մը իմաստակներու հետ տաք վիճարանութեան բռնուած էի...:

Պ. — Ի՞նչ նիւթի շուրջ կը դառնար ձեր վիճարանութիւնը:

Ս. — Հաւու և հաւկիթի շուրջ:

Պ. — Հա՛ հա՛ հա՛, իսկապէս մեծ տխմար մըն ես Սիմոն, որ գրական հակումներդ կը լըրճես սմբած հաւու և հաւկիթի շուրջ վիճարանելով:

Ս. — Կ'աղաչեմ Պերճ, որ այդ կոպիտ վերագրուած ուրիշ անգամ չընես ինձի, նիւթը զոր ես առաջարկեցի, ցարդ ոչ մէկ գիտութիւն կրցած է լուծում մը տալ:

Պ. — Ինչպէ՞ս:

Ս. — Հա՞ւը հաւկիթէն ելած է, թէ հաւկիթը հաւէն:

Պ. — Ատիկա շատ որոշ է, հաւկիթը հաւէն ելած է:

Ս. — Ես ալ ճիշդ այդ թէզը կը պաշտպանէի, և օրինակ կը բերէի մեր տան հաւերը որոնք ամէն օր տասնեակ հաւկիթներ կը ծնին... Ինչ որ է, հիմա կարգա՛ սա նոր շարագրած քերթուածդ որու մասին այս առաւօտ ակումբին բոլոր տղաքը գովեստով ու հիացումով կը խօսէին:

Պ. — Ի՞նչ կ'ըսես:

Ս. — Բոլորն ալ երանի կը կարգային քեզի, այդպիսի գլուխգործոց բան մը յղացած ըլլալուդ համար:

Պ. — Ատոր ամենափոքր տարակոյս չունիմ. քաջ գիտեմ որ այդ բարեսիրտ տղաքը անկեղծ համարում ունին ձիրքերուս վրայ:

Ս. — Մանաւանդ անցեալ գիշեր, ձեր սարքած խնջոյքէն ասդին բոլորն ալ բարձրօրէն կը գնահատեն ձեր բանաստեղծի տաղանդը և պաշտումի հաւասար սէր կը տածեն:

Պ. — Կրնա՞յ մէկը ըսել թէ այս սիրուն քերթուածը իմ ողանդիս պտուղը չէ:

Ս. — Լեզուն կը բռնուի ըսողին. և յետոյ ո՞վ կը համարձակի այդպիսի լրբութիւն մը գործել ձեր գեղեցիկ արձակին դէմ:

Պ. — Բայց տակաւին ձեզի չկարգացի զայն, ի՞նչպէս կը գնահատէք:

Ս. — Միթէ կրնա՞մ շքանչանալ գրուածքի մը, զոր իմ լաւագոյն և սրտակից ընկերոջս տաղանդին յղացումն է. կ'աղաչեմ, իսկոյն կարգացէք ինձի, քանի՛ մը անգամ կարգացէք... կը փափաքիմ ձեր իսկ շրթունքէն զգալ անոր յոյզերն ու յուզումները:

Պ. — Մտիկ ըրէք (Կարգալի վերջ) Ի՞նչպէս գտաք:

Ս. — Ա՛հ ա՛հ, ինչպէ՛ս յղացաք այս հրաշակեր-

տը , (Ձեռքը արտին ցանելով) վայրկեան մը ձեր ձեռքը սրտիս վրայ դրէք և տեսէք թէ ի՞նչ փոթորիկ յառաջ բերաւ ներսդիս (Կ'արտասուէ) :

Պ . — Բայց . . . դուն . . . կ'արտասուե՞ս . . . :

Ս . — Կրնա՞մ չարտասուել (Կոպերունը քացը սրբբելով) ինչպէ՞ս շարադրեցիք այս մարգարտանման տողերը :

Պ . — Բարէ՛ , լուսահոգի հօրս վրայ այնքան արօցունք չթափեցի՝ որքան այս թանկագին թուղթին վրայ . երէկ գիշեր քանի քանի անգամներ արթնցայ , կարգացի , նորէն կարգացի , դարձեալ կարգացի , կըրկին կարգացի և մինչև հիմա դեռ կը կարդամ . . . :

Ս . — Տպել տուր . . . կրնաս ապահով ըլալ որ ամբողջ ժողովուրդը պիտի լայ :

Պ . — Ո՛հ , բարեկամս , երէկուրնէ ի վեր մեր տան մէջ արցունքը չէ դադրած դռնապանէն սկսեալ ամէնքը կ'արտասուեն :

Ս . — Խորհուրդ կուտամ ձեզի , որ այսօր իսկ մամուլի խմբագրութեան ղրկէք զայն :

Պ . — Բոլոր բարեկամներս միեւնոյն խորհուրդը կուտան ինձի , բայց խմբագրութիւնը կը տպէ՞ :

Ս . — Ոտքդ և ձեռքդ համբուրելով . որովհետեւ ասոր նման քերթուածներու կարօտը կը քաշէ խըմբագրութիւնը :

Պ . — Ենթադրենք որ խմբագրութիւնը համաձայն գտնուեցաւ անոր հրատարակութեան բայց գրաշարները անվրէպ , այսինքն առանց յուզումի պիտի կըրնա՞ն շարել այս մարգարտաները :

Ս . — Սիրելիս , անոնք վարժուած են ամէն տեսակ յուզումներու , դուն անմիջապէս ղրկէ :

Պ . — Այո՛ , այդպէս պիտի ընեմ . նաև քերթուածիս հետ ներփակ պիտի ղրկեմ խիստ երկտող մը ,

որպէսզի խմբագրութիւնը շարադրութենէս ստորակէտ մը , բուժ մը չփոխէ :

Ս . — Սովորաբար ես ալ այդպէս կ'ընեմ . պէտք է խիստ բովանդակութեամբ երկտող մը կցէք ձեր արձակին :

Պ . — Եւ առանց փոփոխութեան կը հաւանի՞ն հրատարակելու ձեր գրութիւնները :

Ս . — Դժբախտաբար ոչ . . . այդ իմաստակ խըմբագիրները ղրկած բազմաթիւ յօդուածներէս մէկ հատը միայն կը հրատարակեն , բայց այնքան կը լըրճեն և կը յապաւենն դրութիւնս զոր անձանաչելի կը դառնայ . եթէ յօդուածին ասկ անունս չպառկի , երբեք պիտի չկրնամ գիտնալ թէ ատիկա իմ ստեղծագործութիւնս է :

Պ . — Եթէ քանի մը ոսկի քերթուածիս հետ ներփակ ղրկելու ըլլամ , անփոփոխ կը տպի՞ն :

Ս . — Բնականաբար . . . շատ անգամ գրութիւնս թերթին մէջ հրատարակուած տեսնելու համար դրամական առաքումներ կ'ընեմ խմբագրութեան :

Պ . — Ատիկա իմ սկզբունքիս դէմ կը գտնեմ , արդէն շատ ալ համամիտ չեմ զայն հրատարակելու , անշուշտ աւելի ետքը պատեհութիւններ չեն պակսիր քերթուածս հասարակութեան սեփականութիւնը դարձընելու համար . երկու օր է որ սաստիկ ոգեւորութենէս ոչ ախորժակ ունիմ ճաշելու և ոչ ալ փափաք տունէն մեկնելու :

Ս . — Սովորաբար ես ալ այդ երջանիկ տրամադրութիւնը կ'ունենամ վսեմ յղացումէ մը ետքը :

Պ . — Այսօր պիտի ընդունիմ նախկին դասընկերօջա՛ վահանին այցելութիւնը , ոմանք իր գրական արժանիքին մասին գնահատական խօսքեր կ'ընեն և ուրիշներ՝ կատարեալ ոչնչութիւն մը կը ներկայացնեն զայն :

Ս. — Այդ իմաստակին խօսքը մի ընդեր ի սէր Աստուծոյ :

Պ. — Արգարե , գոռոզ և յաւակնոտ նկարագիր մը ունի , վերջերս թերթին մէջ լոյս տեսած յօդուածիդ մասին չափազանց անողոք դիտողութիւններ ըրաւ :

Ս. — Գարշելի՛ն :

Պ. — Ամբողջ գրութեան մէջ գնահատանքի արժանի տող մը չգտաւ :

Ս. — Բանագո՛ղը :

Պ. — Կը խոստովանիմ որ կեղծ տաղանդ մըն է . . . շարաթ մը առաջ , ընկերներով քաղաքին բացօթեայ պարտէզները պտոյտի գացեր էինք , ճամբան՝ մեզի կը քննադատէր Շէյքսպիրի «Համլէթ»ը :

Ս. — Շէյքսպիրը տարբեր , շատեր արդէն քըն նագատած են իր գործերը , բայց այս ցաւագարը ակի մը պաշարով համարձակի վարկաբեկիչ դիտողութիւններ ընել իմ գրութիւններու նկատմամբ :

Պ. — Բայց լուռ կեցիր , ահաւասիկ ինքը կուգայ :

### ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

#### ՆՈՅՆՔ ԵՒ ՎԱՀԱՆ

ՎԱՀԱՆ. — Բարե՛ւ ձեզ :

ՊԵՐՃ. — Այս ո՞ւր մնացիր եղբայր , երկու օր է որ քեզ տեսած չեմ :

ՍԻՄՈՆ. — Ճիշդ շարաթ մը կ'ըլլայ որ կորսնցուցած եմ զինքը :

Վ. — Այս քանի մը օրը տունէն չկրցայ դուրս ելլել , որովհետեւ հայերէն ոճի ուսուցմասիբութեան մասին պատրաստած հատորս աւարտեցի :

Ս. — Ո՞ճ ըսիք :

Վ. — Այո՛ , նպատակադրած եմ հայերէն ոճը ֆրանսական ոճին մօտեցնել , այսինքն , օրինակով բացատրեմ որ հասկնաք , «պարօնը գինի խմեց» . այս պարբերութիւնը զուտ հայերէն արտայայտութիւն է . բայց գեղեցիկ չէ զայն ֆրանսերէն ոճին վերածելով պիտի ըսենք՝ «պարօնը խմեց գինի» :

Պ. — Ձեր այս տեսութիւնը չեմ յուսար որ ընդունելութիւն գտնէ հայ գրողներէն :

Ս. — Ասիկա այլանդակ բան մըն է , ասոր համար գուցէ ձեզ քարկոծեն :

Վ. — Երանի՛ թէ . . . այդ քարերը՝ իմ փառքիս շէնքը պիտի կառուցանեն , ես վերջնապէս որոշած եմ գործադրութեան դնել իմ այս տեսութիւնս . ինչո՞ւ Ֆրանսացիք և ուրիշ բազմաթիւ քաղաքակիրթ ազգեր ըսեն՝ «մէջը սենեակին» և մենք ըսենք «սենեակին մէջ» . երբեք հօշտ չեմ այս քերականութեան :

Պ. — Ի՞նչ միջոցներ ունիք ձեր այս ծրագիրը յաջողանելու :

Վ. — Թերթերուն և պարբերականներուն զրկած բոլոր գրութիւններս պիտի շարագրեմ այս ոճով , այսինքն՝ փոխանակ գրելու «Օրիորդին գեղեցկութիւնը իմ սիրտս տոչորեց» , պիտի ըսեմ «Գեղեցկութիւնը օրիորդին տոչորեց իմ սիրտս» :

Պ. — Եթէ խմբագրութիւնը մերժէ հրատարակել :

Վ. — Գժբախտաբար միշտ ալ մերժած է . . . բայց մեղքը իր վիզը . . . ինչ որ է , լսեցի որ սքանչելի քերթուած մը շարագրեր ես , ակումբին մէջ մեր ընկերները լորձնաշուրթն կը փառաբանէին . կարգա՛ անգամ մը ինձի , որպէս զի քանի մը օգտակար գիտողութիւններ ընեմ :

Պ. — Մտիկ ըրէք (Բարձրաձայն կարդալէ ետք) :

Վ. — Այս է:

Պ. — Այո՛, բան մը չգրայի՞ք:

Վ. — Ո՛չ մէկ բան. այս արձակդ, սիրելիս, բաւրակ ջիղ մը անգամ չի կրնար թրթռացնել: Եթէ այս քերթուածը յղացողը ես ըլլայի, ինքզինքս պիտի համարէի աշխարհի ամենէն դժբախտ մտաւորականը. . . կը զարմանամ թէ՛ բարձրագոյն կրթութիւն ստանալէդ ետքը, ի՞նչպէս յղացար ասանկ ձախաւեր քերթուած մը:

Ս. — Դուք ձախաւեր կը կոչէք ասիկա:

Վ. — Աւելի ծանրակշիռ բառ մը չգտայ զայն որակելու համար:

Ս. — Այս կը նշանակէ որ չհաւնեցաք:

Վ. — Անկեղծօրէն կը խոստովանիմ թէ չի հաւնեցայ:

Ս. (Պերճիկ). — Այս իմաստակին խօսքերուն կարեւորութիւն մի տար, նախապէս քեզի չըսի՞ թէ արձակդ այս ապուշին չկարգաս:

Պ. (Յաճ առ Սիմոն). — Ցաւագարին մէկն է: (Բարձր) Եկէք ներս երթանք մինչև որ մեր միւս ընկերները գան, ձեզի ցոյց տամ պատանեկութեանս շրջանին շարագրած սիրային բանաստեղծութիւններու տետրակը:

(Ամենքը աջակողմեան դռնէն դուրս կ'ելլեն):

### Տ Ե Ս Ի Լ Զ Ո Ր Ր Ո Ր Դ

#### ԶԱՐԵՉ ԵՒ ԼՈՒՍԻ

(Խօսակցելով հերս կը մօտեն Գալասի դուռնէն):

ԶԱՐԵՉ. — Իսկապէս հրաշալի է. նախորդ քերթուածներդ վրայ, այս մէկը գերազանց բան մը ունի:

ԼՈՒՍԻ (Թուղբը կը ծալի եւ կը զետեղէ պայուսակից մեջ). — Ես ալ այդ գեղեցիկ տպաւորութիւնը ունիմ այս քերթուածիս վրայ և կրնամ ըսել թէ ասիկա Զապէլ Եսայեանի լաւագոյն բանաստեղծութեան հետ կը մրցի. . .

Զ. — Անտարակո՛յս:

Լ. — Երբ ես կը կարդամ, ինծի կը թուի թէ՛ հըրեշտակ մը քաղցրանուագ մեղեդի մը կը թրթռացնէ ականջիս:

Զ. — Վարուժանի ոչ մէկ բանաստեղծութիւնը կրցաւ ասոր նման դիւթել և համագրաւել սիրտս. ես վստահ եմ որ եթէ ձեր այս բանաստեղծութիւնը թերթի մը կամ պարբերականի մը մէջ հրատարակուի անպայման հայազգի մեծ քննադատ Արշակ Զօպանեանը իր «Անահիտ» հանդէսին մէջ ձեր տաղանդին և բանաստեղծական ձիրքերուն մասին տարփուշակից սիւնակներ կը յատկացնէ:

Լ. — Ո՛հ, մի՛ յիշէք ինծի այդ մարդուն անունը, լաւագոյն զգացումը զոր կը տածէի իրեն երգարատնէ ի վեր, քինախնդրութեան փոխուած է. հակառակ համակրական նամակներու և զրկած բազմութիւն քերթուածներու որ բարի ըլլար իր «Անահիտ»-ին մէջ գէթ անոնցմէ լաւագոյնները հրատարակելու, ոչ իսկ քառեակ մը խիղճ ըրաւ ի լոյս ընծայելու:

Զ. — Մի՛ վշտանաք ընկերուհիս, չեմ յուսար որ ձեր գրութիւնները զամբիւղ նետած ըլլայ:

Լ. — Զամբիւղ ըսիք:

Զ. — Սովորաբար այն գրութիւններն ու յօդուածները որոնք թերի հայերէնով մը գրուած են և բովանդակութեամբ ալ չեն շահագրգռեր՝ խմբագրութիւնը «համբաւաւոր» զամբիւղը կը ձգէ գանսնք. . . Բայց ահաւասիկ մեր ընկերները կուզան:

### Տ Ե Ս Ի Լ Շ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

#### ՆՈՅՆՔ, ՊԵՐՃ, ՎԱՀԱՆ, ՍԻՄՈՆ

ՊԵՐՃ. — Օ՞, մեր ընկերները այստեղ մեզի կը սպասեն, ի՞նչ ուրախառիթ օր:

ՎԱՀԱՆ. — Ի՞նչ երջանկաբեր առիթ:

ՍԻՄՈՆ (ՊԵՐՃԻՆ). — Ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ նորավէպիս ձեռագիրը հետո բերած ըլլայի:

Վ. — Ափսո՛ս որ քերթուած է երուս տետրակը խելք չըրի հետո բերելու:

Լ. — Այսօր տարօրինակ գոհունակութիւն մը կը կարգամ ձեր գէմքերուն վրայ:

Ս. — Ձեր ներկայութիւնը Օրիորդ, կը խանդավառէ մեզ:

Լ. — Օ՞, Սիմոն, թո՛ղ այդ սին մեծարանքը, պէտք է գիտնաս որ այդ յանկերգդ աւելի քան կը զգուեցնէ զիս:

Ս. — Ո՞հ, միթէ կրնամ արգիլել զգացումներս որ չի տպաւորուին ձեր դրաւչութենէն:

Ջ. (ՍԻՄՈՆԻՆ). — Լեզուդ չափաւորէ, հիմա աղջիկը պիտի փախցնես:

Լ. (ՍԻՄՈՆԻՆ). — Երկար ատենէ ի վեր ականջներս կը լսեն ձեր գովեստները զորս այնքան աժան կը շուայէք, բայց մի՛ վշտանաք եթէ ձեզ չեմ փոխադարձեր գնահատանքի ոչ մէկ բառ:

Պ. (ՄԵԿՈՒՍԻ). — Ճիշդ ժամանակն է քերթուածս իրեն կարգալու, ապահով եմ որ այս անգամ պիտի յաջողիմ տիրանալ իր զգացումներուն:

Վ. — Եթէ նախապէս գիտնայի թէ այսօր այցեւորութիւն պիտի տաք Պերճի տունը, տասը տարուան ընթացքին գրած բանաստեղծութիւններս, նորավէ-

պերս, բովանդակներս, վերջապէս բոլոր հին ու նոր ձեռագիրներս որոնք վսեմ ներշնչումով և կորովի զգացումներով յղացուած, տաղանդիս ստեղծագործութիւններն են, հետո կը բերէի ձեզի կարգալու համար:

Ս. — Մեծապէս կը ցաւիմ որ Սիմանթօի կեանքին ու գործին մասին պատրաստած եռնատոր ընդարձակ աշխատութիւնս հետո չբերի:

Լ. — Պրն. Պերճ. կր փափաքիմ ձեր շարագրած քերթուածը իմանալ, բայց բոլորովին առանձին ըլլալ կ'ուզեմ քեզի հետ:

Պ. — Ուրեմն երթանք յարակից սենեակը, որ իմ գրասենեակս է: (ՍԶԿԿՈՂՄԵԱՆ ԴՈՅՆԵՆ ԴՈՒՐՍ Կ'ԵՂԵՆ):

### Տ Ե Ս Ի Լ Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ

#### ՍԻՄՈՆ, ՎԱՀԱՆ, ՉԱՐԵՋ

ՎԱՀԱՆ. — Անկեղծ սիրտ մը ընկերներ՝ երբեք չի վարանիր ճշմարտութիւնը խոստովանելու. Պերճի քերթուածը ոչ միայն զուրկ է բանաստեղծական ներշնչումէ՞ այլ կր մատնէ քերթողական տաղանդի չըզոյութիւնը իր բնութեան մէջ:

ՍԻՄՈՆ. — Չափազանց արդար կը գտնեմ ձեր այս դիտողութիւնը, կը ցաւիմ որ իր քերթուածին նկատմամբ իմ տհաճութիւնս յայտնելու ձեր ժպրհուրթիւնը չունեցայ:

ՉԱՐԵՋ. — Առտուն, ճամբուն վրայ քանի մը անգամ կարգաց ինձի, բայց անկեղծօրէն ըսեմ թէ ոչինչ կայ գովեստի արժանի իր այդ յղացումին մէջ:

Վ. — Վերջապէս երկուքդ ալ հաւասար յանցաւորներ էք՝ այդպիսի ցախաւեր գրուածք մը բարձրօրէն տարփողած ըլլալնուդ համար:

Ս. — Բայց կրնայի՞ր իրեն ուղղակի ըսել թէ՞ արձակդ սնյաջող փորձ մըն է, քանի որ բոլոր ա հիւրաբար իր տան մէջ կը գտնուինք այս պահուստ :

Չ. — Ճիշդ այդ փափուկ պարագան նկատի առնելուս, զգոյշ կեցայ անհաճոյ ակնարկութեամբ զինքը վիրաւորելու գիտաւորութենէս :

Վ. — Բայց դուք աստուածացուցիք այդ սին գրուածքը :

Ս. — Ամէն պարագայի տակ, չէի կրնար պոռալ երեսն ի վեր, իր կեղծ տաղանդ մը ըլլալը :

Չ. — Ասկէ մտաւորապէս ամիս մը առաջ տունս հիւրասիրեցի զինքը և մի քանի քնքուշ քերթուածներ կարդացի :

Վ. — Մեծարենցէ՞ն :

Չ. — Ո՛չ, իմ հեղինակութիւններէս տգէտը՝ առանց վայրկեան մը խորհելու թէ՛ կեդրոնականէն շրջանաւարտ ելած եմ, թէ բազմաթիւ օտար կրթական հաստատութիւններ յաճախած և վկայուած եմ, թէ ամբողջ երկու սենեակ լեցուն գիրք ունիմ ամէն լեզուէ, լրբութիւնն ունենայ քերթուածներուս համար ըսել թէ վսեմ գաղափարներ չեն պարունակեր :

Ս. — Միեւնոյն վարժուցքը ունեցաւ ինծի հանդէպ երբ քանի մը շաբաթ առաջ տունս զիս տեսնելու եկած էր. ինք՝ թաղային վարժարանէ ընթացաւարտ, մինչ ես Պոլսոյ Պէրպէրեան վարժարանէն, ինք՝ հազիւ յիսուն կտոր գիրք ունի, մինչ ես աւելի քան հազար կտոր... չհաւնի՞ Սիամանթօի քերթողական հատորներուն մասին պատրաստած քննադատական ուսումնասիրութիւնս :

Վ. — Ընկերներ, կարգը իմս է խօսելու, պիտի խնդրեմ որ լաւ մտիկ ընէք զիս. ինչպէս ըսի, անկեղծ սիրտ մը ունիմ, չեմ կրնար ճշմարտութիւնը չխոստովանիլ. ընդունեցէք որ երկուքդ ալ ձեր իմա-

ցական և մտաւորական կարողութեամբ չէք կրնար մրցիլ ինծի հետ, այս իրողութիւնը ուրիշ մը անշուշտ չպիտի ըսեր ձեզի, բայց ես՝ չեմ կրնար չըսել... անցեալները Պերճին կարդացի սքանչելի, խիստ հետաքրքրական և գրական մեծ արժէք ներկա ացնող ձեռագիր նորավէպ... շիտակը այնքան հիացաւ վէպիս իմաստախրական և հոգեբանական բովանդակութենէն, ոճին հեղասահ և երաժշտական ընթացքէն... այսինքն՝ ներդաշնակութենէն ըսել կ'ուզեմ, կէտադրութեանց այնքան ճիշդ, տեղին և պատշաճ գործածութենէն որ պահ մը կասկածեցաւ թէ այդ գրաւիչ գրուածքը գործը եղած ըլլայ հանճարեղ գրագէտի մը, փիլիսոփայի մը, բանաստեղծի մը, մեծ մտաւորական մարդու մը... :

Չ. — Առ հասարակ Պերճը երբ գրութիւն մը գեղեցիկ գտնէ՞ գայն բանագրողութեամբ կը վերսօրբէ :

Վ. — Մեր ընկերուհին և ընկերը բաւական ուշացան քանի մը վայրկեանի համար ինծի ներողութիւն : (Դուրս կ'ելլէ ազակողմեան դռնէն) :

### Տ Ե Ս Ի Լ Ե Օ Յ Ն Ե Ր Ո Ր Դ

#### ՍԻՄՈՆ ԵՒ ՉԱՐԵՋ

ՉԱՐԵՋ. — Կ'ատեմ այս յաւակնոտը :

ՍԻՄՈՆ. — Հաւատացի՛ր, եթէ հիմա հոգին փչէ, չպիտի ցաւիմ :

Չ. — Կեղծ տաղանդ մըն է :

Ս. — Ցաւագար մը՝ որ հազիւ քանի մը տասնեակ գիրք ունի... :

Չ. — Հապա ինծի ըսաւ թէ տասը պահարան լեցուն գիրք ունի :

Ս. — Այո՛... իր երազին մէջ :

Չ. — Ստախօ՛սը :

Ս. — Միշտ գիրք կը մուրայ ինձմէ :

Զ. — Զարմանալի :

Ս. — Անցեալ օր Շէյքսպիրի «Համլէթ»ը տուի, ապուշը փոխանակ կարդալու, սկսեր է քննադատական ուսումնասիրութիւն մը պատրաստել :

Զ. — Յիմա՛ր . . . :

Ս. — Գրքին բոլոր էջերը մատիտի գիծերով և գիրերով մրտեր է և կողքն ալ քանի մը էջերու հետ՝ ես գիտեր ո՛ւր ճամբորդեր է :

Զ. — Փախո՛ւկ . . . :

Ս. — Մինչև որ քանի մը անգամ չի շեշտեմ իր մօտ գիրք ունենալս, երբեք չխորհիր վերադարձնել :

Զ. — Շիտակը Պերճի քերթուածը այնքան անհաճոյ չթուեցաւ ինձի, կը ցաւիմ որ այդ տխմարին դիտողութիւնները վաւերացուցի . . . :

Ս. — Ճիշդ է՝ իր լաւագոյն ստեղծագործութիւնը կարելի է համարել բայց ուշագրաւ պարագայ մը կայ զոր պէտք է ուշագրութեանդ յանձնեմ, այդ քերթուածը քեզ այնքան լաւ չպիտի տպաւորէր՝ եթէ անոր բազմաթիւ թերութիւններուն սրբագրութիւնը — բայց խօսքը թող մեր մէջը մնայ — ես կատարած չըլլայի :

Զ. — Ի՞նչ կ'ըսէք :

Ս. — Երբեք մի՛ զարմանաք. այս խոստովանութիւնը կ'ընեմ միայն ձեզի, ուստի կը խնդրեմ որ ձեր շրթունքը չփորձուի զայն ուրիշին իմացնելու :

Զ. — Ես ալ կարծեցի թէ իր տաղանդին արգասիքն է այդ սքանչելիքը :

Ս. — Իր տաղանդի՞ն, օ՛, բարեկամս, միամիտ չըլլանք և չխառուինք երեւոյթներէն, մենք երկուքս զիրար կը ճանչնանք իբր ճշմարիտ գրողներ, ուստի զիրար չխաբենք մեզ շրջապատող կարգ մը իմաստակներու ձրի գովեստ և փառաբանանք հիւսելով :

Զ. — Ո՛հ, կը հիանամ ձեր արթուն գիտակցութեան վրայ :

Ս. — Ամէնքն ալ այդ հիացումը ունին մտքիս և տաղանդիս վրայ :

Զ. — Բայց ի՞նչպէս պէտք է զանազանել իսկատիպ տաղանդ մը, կեղծ տաղանդէ մը :

Ս. — Շատ դիւրին . . . հիմա կրնա՞ք ինձի համար ըսել թէ՛ կեղծ տաղանդ մըն եմ :

Զ. — Պէտք է աշխարհի մեծագոյն յիմարը ըլլամ, ատանկ այլանդակ վերագրում մը ձեզի ընելու համար :

Ս. — Բայց լուեցէք, ստքի ձայներ կը լսեմ . . . հոս կուգան :

### Տ Ե Ս Ի Լ Ո Ւ Յ Ե Ր Ո Ր Դ

#### ՆՈՅՆՔ, ՊԵՐՃ, ԼՈՒՍԻ, ՎԱՀԱՆ ԵՒ ԼԵՒՈՆ

(Կը մօնեն աշակողմեան դուռէն՝ իսկ Լեւոն ճակատի դուռէն)

ՊԵՐՃ (ԼԵՒՈՆԻՆ) . — Ճիշդ ժամանակին եկար, լաւ կ'ըլլայ որ քու կարծիքդ ալ շօշափեմ, դուն որ մտաւորականի լաւակնութիւն ունիս քեզմէ շատ աւելի բարձր արժանիքներու գործերը ստորագնահատելու և միայն քու ճշմարիտ ձեռագիրներուդ սին փառաբանանքը հիւսելու, տեսնենք ի՞նչ պիտի ըլլայ տպաւորութիւնդ քերթուածի մը նկատմամբ, որ ինքնին յաղթանակ մըն է և պատիւ կը բերէ զայն ստեղծողին . . . :

ՍԻՄՈՆ . — Կը թելադրեմ որ չկարդաք ձեր քերթուածը, ապահով եմ որ այդ մարգարիտները կեղծ քարեր պիտի հուսակէ :

ԼԵՒՈՆ . — Ընկերներ, անձիս նկատմամբ ես բընաւ պարծենքոտ չեմ այդ զգացումը արժարժող մար-

գիկ առ հասարակ ցոյց կուտան արգահատելի տգիտութիւն մը. եթէ դուք արդար գիտողութիւն մը յաւակնոտութեան սովոր էք վերագրել՝ դժբախտաբար հոն է որ միտքը կը կորսնցնէ իր դատողութեան լոյսն ու պայծառութիւնը:

ԼՈՒՍԻ. — Օ՛ր Պր. Լեւոն, ձեր խօսքերը տաղտկալի և անիմաստ շատախօսութիւններ են, երկարբարակ փրկիսփայելու տեղի չկայ, Պերճը արձակ քերթուած մը շարագրած է, ամէնքս ալ խորապէս հիացանք և շնորհաւորեցինք իր յաջողութիւնը. հիմա կարգը ձերն է լսելու և գրուատելու:

ԼԵՒՈՆ. — Հաւատացէք Օրիորդ, սրտիս համար հազուագիւտ բերկրութիւն մը պիտի ըլլար եթէ Պերճ իրապէս յաջողած ըլլար իր փորձին մէջ:

Ձ. — Կարդացէք Պերճ՝ ձեր արձակը:

Պ. — Մտիկ ըրէք (Կը կարդայ):

Ս. — Ամէն անգամ երբ կը լսեմ ձեր այս թանկագին քերթուածը, աչքերս արցունքի լիճեր կը դառնան:

Ձ. — Հաւատացէք, այս հրաշակերտը մարմնիս ամենէն բարակ ջիւղն անգամ կը յուզէ:

Ս. — Եւրոպացի հուշակաւոր բանաստեղծներու քերթողական հատ ըներուն մէջ չեմ հանդիպած բանաստեղծութեան մը, որ ասօր նման սրտաշարժ գրբաւ չութիւն մը ունենար. . . :

Վ. — Բայց Պրն. Լեւոն, ինչո՞ւ լուռ կը մնաք, ինչո՞ւ չէք խօսիր:

Ձ. — Արդեօք աննպաստ կարծիք մը կ'որոճաք ձեր մտքին մէջ և չէք համարձակիր յայտնելու:

Վ. — Պէտք է որ յայտնէք ձեր կարծիքը, ըլլայ նպաստաւոր կամ աննպաստ:

ԼՈՒՍԻ. — Այս առաքելութիւնը կը սպասենք ձեզմէ, Պրն. Լեւոն. . . :

ԼԵՒՈՆ. — Ուրեմն լսեցէք. (Պերճին) Քուցէ շատեր ձեր այս արձակ քերթուածը գոհար մը նկատեն, ոմանք պանծացնեն և ուրիշներ մտքի յաղթանակ մը հուշակեն զայն. այսպէս ընելու սովոր են ընդհանրապէս անոնք՝ որոնք իրենք զիրենք ձեզի անկեղծ բարեկամ ձեւացնելով ձեզմէ շահ մը կ'ակնկալեն: Ոմանց համար գերագոյն հաճոյք մըն է ձեր թերութիւններուն մասին լուրթիւն պահելը՝ իսկ կան ալ որ ձեր սրտակիցներն են և համարձակութիւն չեն ունենար ձեր տկարութիւններուն մասին խօսելու: Կայ աւելի ճարպիկ գասակարգ մը, որ անկեղծ երեւալու նրբին հանգամանքները իւրացուցած է ձեր նիւթական առաւելութիւններէն օգտուելու համար. կան ալ որ գնահատել միայն գիտեն՝ որովհետև չունին գրական ողջմիտ հասկացողութիւն. ամենէն արգահատելի կարելի է համարել այն գասակարգի մարգիլը՝ որոնք իրենց ետը միայն կը ճանչնան և իրենց միտէն ու ոսկորէն դուրս արժանիք գնահատելու առաքելութիւնը չունին. . . :

Ս. — Ինձի կը թուի թէ դեռ ձեր խօսքերուն շղթան պիտի երկարէք. առանց յայտնելու ձեր կարծիքը:

Ձ. — Մանաւանդ այսքան երկարաշունչ նախաբանէ մը ետքը ձեր տպաւորութիւնը յայտնած պէտք էիք ըլլալ:

ԼԵՒՈՆ (Պերճին). — Ձեմ ըսեր թէ ձեր գրութիւնը անյաջող փորձ մըն է, թէպէտ գեղեցիկ և յարգի տողեր կան. բայց ուրիշներ ձեզմէ շատ առաջ արդէն յղացած են:

ԼՈՒՍԻ. — Բայց մինչև հիմա չըսիք թէ արձակը գեղեցիկ գրուածք մըն է թէ ոչ:

Վ. — Պրն. Լեւոնը միայն իր ձեռագիրները սովորութիւն ունի գեղեցիկ բառով որակելու:

ԼԵՒՈՆ. — Ո՛րչ, բարեկամս, սխալ կը դատէք ծանր նախատինք մը կ'ընէք ինծի դէմ:

Ս. — Բայց ասոր նման գլուխգործոց քերթուածի մը մասին լուսթիւն պահելը գիտէ՞ք, ի՛նչ մտածելու կը մղէ մեր մտքերը:

ԼԵՒՈՆ. — Ձեմ փափաքիր գիտնալ:

Ս. — Կը նշանակէ որ նախանձի զգացում մը կը սանձէ ձեր լեզուն գովեստի խօսք մը ընելու:

ԼԵՒՈՆ. — Տգէտներն են որ այդպէս կը տրամաբանեն՝ ողջամիտ գրողներ այդ կերպ չեն դատեր:

Պ. — Բայց ի՞նչ կամակոր ընթացք է այս, որ չէք ուզեր ձեր տպաւորութիւնը յայտնել քերթուածիս մասին:

ԼԵՒՈՆ. — Ես պէտք եղածէն աւելի խօսեցայ ձեզի... (Լուսիիճ) Օրիորդ Լուսի, կը փափաքիմ առանձին տեսակցութիւն մը ունենալ ձեզի հետ, եթէ կը բարեհաճիք...:

ԼՈՒՍԻ. — Սիրով: (Աջակողմեան դռնէն կը մեկնի):

**Տ Ե Ս Ի Լ Ի Ն Ե Ր Ո Ր Դ**  
**ՊԵՐՃ, ՍԻՄՈՆ, ՉԱՐԵՆՆ**

ՍԻՄՈՆ. — Մեծ տխմարութիւն ըրիր, արձակդ այդ թշուառականին կարգալով:

ՉԱՐԵՆՆ. — Ես նախապէս թելադրեցի քեզի որ չկարգաս:

Ս. — Աւետարանը իմաստուն խօսք մը ունի որ այս պարագային կը պատշաճի. կ'ըսէ «Մի՛ արկանէք զժարգարիտս առաջ խոզաց»:

Չ. — Այդ իմաստակը, որ բանագողութիւններով այսօր հասարակութենէն փառք ու պատիւ կը վայելէ, երբեք արժանի չէր մտիկ ընելու ձեր թանկագին

արձակը. երկուերեք անգամ կարգացիք և քիչ մնաց սաստիկ յուզումէս մանուկի պէս պիտի արտասուէի, մինչդեռ այդ քարասի՛րտը...:

Ս. — Ինքզինքը կը ճգնի այնպէս ցոյց տալ թէ բնաւ պարծենկոտ չէ:

ՊԵՐՃ. — Իրաւունք ունիք բարեկամներս, այդ կոպիտը որ գրականութեան և գեղարուեստի ոչ մէկ մարզի մէջ ձիրք և հակում ունի, որ իր ամբողջ գիտցածը ուրիշ բան չէ՝ բայց եթէ հուշակաւոր փիլիսոփաներու և բանաստեղծներու գործերէն գոց սորված մեծ գաղափարներ ու մտածումներ:

Չ. — Թշուառ մայր մը ունի՛ և իրենց տան մէջ աթոռ մը չէք գտնէր նստելու:

Պ. — Մինչդեռ, մենք ոչ միայն նիւթական անհուն բարիքներով օժտուած ենք, այլ ունինք բնածին յատկութիւններ՝ գեղարուեստի և մշակոյթի բոլոր մարզերուն մէջ. ունինք վսեմ ներշնչումներ, քերթողական շնորհ, մանաւանդ տաղանդ բանաստեղծութեան...:

Ս. — Տաղանդ քնարերգութեան...:

Չ. — Տաղանդ հովուերգութեան...:

Պ. — Իմաստասիրութեան...:

Ս. — Ողբերգութեան...:

Չ. — Թատերգութեան...:

Պ. — Կատակերգութեան...:

Ս. — Լռեցէ՛ք... ահաւաստիկ մեր ներշնչման դիցունհին կուգայ:

**Տ Ե Ս Ի Լ Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ**  
**ՆՈՅՆՔ, ԼՈՒՍԻ ԵՒ ԼԵՒՈՆ**

ԼՈՒՍԻ. — Ընկերներ, այժմ ուշագիւր լսենք Պրն. Լեւոնը՝ որ ձեզմէ իւրաքանչիւրին համար շահեկան խօսքեր ունի ընելիք:

ԼԵՒՈՆ. — Սիրելի Պերճ, առաջին խօսքս քեզի ուղղուած է, դուն որ կը փափաքիս քերթուածներուդ մասին իմ ճշմարիտ կարծիքս իմանալ:

Ս. — Վիքթոր Հիւկօ մը այսքան ինքնազատան չեշտով չպիտի խօսէր:

ԼԵՒՈՆ. — Ձեր բոլոր արձակ և չափածոյ բանաստեղծութիւնները զորս՝ առիթն ունեցեր եմ կարգալու գանազան պարբերական հրատարակութեանց մէջ. նորութիւն մը չեն բերեր մեր մշակոյթին: Դուք կը սիրէք երգել արեւը, լուսինը, աստղերը, ամպերը և բոլոր երկնային մարմինները՝ որոնք դժբախտաբար կը լղրճեն և անհամ բովանդակութիւն մը կուտան ձեր քերթուածներուն: Կը գրէք մանաւանդ գիշերուան մասին և չունիք քերթուած մը որ աստեղագորդ, կամ ամպամած և կամ լուսնակներով և արեգակներով խճողուած չըլլայ... Ինչո՞ւ միշտ երկինքը կը դիտէք, իջեցուցէք ձեր նայուածքը երկրի վրայ, ամպածրար բարձունքներէն դէպի հրաշալի բնութիւնը ուր՝ այնքան անհաշուելի նիւթեր կան բանաստեղծելու:

ՊԵՐՃ. — Քերթուած մը առանց աստղի, առանց արեւի և լուսնի, մեծապէս կը տուժէ իր պայծառութենէն:

ԼԵՒՈՆ. — Ի՞նչ ճղճիմ մտածողութիւն է այդ. (Սիմոնի) իսկ գալով ձեր բանաստեղծութիւններուն, անոնք ալ գինիի ծանր հոտ մը ունին, այնքան շատ գինի կը խմցնէք ձեր քառեակներուն՝ որոնք ի վերջոյ կը կորսնցնեն իրենց հաւասարակչութիւնը...:

ՎԱՀԱՆ. — Ուրախ եմ որ Պերճին և Սիմոնին տկարութիւնները քաջաբար կը յայտարարէք...:

ԼԵՒՈՆ (Վահանի). — Ձեր թերութիւններուն մասին ալ քաջութիւն չպիտի պակսի ինձի խօսելու:

Վ. — Ինչպէ՞ս:

ԼԵՒՈՆ. — Խնդրեմ, մի՛ ընդմիջէք զիս, ձեր թերութիւնները աւելի զարհուրելի բան մը ունին, տաղտկալի միօրինակութիւն մը և միշտ միեւնոյն անփոփոխ յանկերգը...:

Վ. — Ինձի՞ էք:

ԼԵՒՈՆ. — Կ'երգէք արեկոծ ծովը... փրփրակուտակ ալիքները... նաւարեկութիւնը... ծովուն վիհերն ու անդունդները... լեռնակուտակ ալեաց գահավիժումները և վերջապէս զօրաւոր քամին և խօլ փոթորիկը. եթէ այս միօրինակութենէն չփրկէք ձեր քերթուածները՝ ես կը խորհիմ թէ օր մը ձեր բանաստեղծութիւններուն հետ ծովամոյն պիտի ըլլաք ձեր երազած մրրկայոյզ ալիքներուն մէջ:

Վ. — Ի՞նչ ամբողջփեղ խօսքեր են ասոնք:

ԼԵՒՈՆ. — Ես վերջացուցի իմ խօսքս... այո՛, ճիշդ ժամանակն է մեկնելու... ուրեմն ցտեսութիւն բոլորիդ:

### ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸՄԷԿԵՐՈՐԴ

#### ԼՈՒՍԻ, ՊԵՐՃ, ՎԱՀԱՆ, ՍԻՄՈՆ ԵՒ ՋԱՐԵՀ

ՎԱՀԱՆ (Յուզուած). — Ի՞նչ ստորին վարմունք է այս, ի՞նչ յուեգոյն ընթացք և ի՞նչ անպատկառութիւն:

ՋԱՐԵՀ. — Բայց ինչո՞ւ կը խռովիք Պ. Վահան, իմաստակիր մը խելապատակէն փրթած ցափռուքները ինչո՞ւ ձեզ այսքան կը փոթորկեն:

ՍԻՄՈՆ. — Իմ քերթուածներուս համար ըսել թէ գինի կը հոտին:

ՊԵՐՃ. — Ամենէն զարհուրելի վերագրումները ընէ իմ թանկագին ձեռագիրներուս համար:

ԼՈՒՍԻ. — Մի՛ սրտմտիք յարգելի բարեկամներս, ծայրայեղ յուզման մէջ մի գնէք ձեր սրտերը. Պրն.

Լեւոնի դիտողութիւններուն համար ես կը կարծեմ որ չարժէր այսքան զայրոյթ և յուզում յարուցանէք :

Ս. — Եթէ դուք այստեղ չըլլայիք, այդ խելագարին գանկ, երկուքի կը բաժնէի :

Վ. — Ձեր բարեհամբոյր ներկայութիւնը, զիս ետ կեցուց խիստ անաւոր ոճիրէ մը :

Պ. (Վահանիճ). — Ձեր բանաստեղծութիւններուն միօրինակ լթեան մասին իր դիտողութիւններուն մէջ անտեղի յարձակում մը շիտա՛ը չեմ գտներ . . . :

Վ. — Ինչպէ՞ս կ'արդարացնէ՞ք իր ընթացքը :

Պ. — Գրեթէ . . . :

Վ. — Դուք ամէնքդ ալ տգէտներ էք :

Ջ. — Իսկ դուն համբաւաւոր իմաստակ մը :

Ս. — Եղբայրներ, ինչո՞ւ ի զուր տեղ զիրար կը վիրաւորէք . . . :

Պ. — Դուք լռեցէք, կ'աղաչեմ :

Ս. — Դուն լռէ՛, հիմա մի ստիպեր որ բերանս բանամ :

Վ. — Թողէք որ նսխ ես խօսիմ և ապացուցանեմ իր ցաւագար մը ըլլալը . . . :

Ջ. (Վահանիճ). — Դուն չէի՞ր որ շարունակ քերթուածներդ ինձի կը բերէիր և կը խնդրէիր որ զանոնք սրբալրեմ և գողտրիկ խորագիրներ գտնեմ անոնց :

Ս. (Պերճիճ). — Ի լուր բոլորին, կը յայտարարեմ որ իր արձակ քերթուածին նիւթը ես հայթայթեցի իրեն . . . :

Պ. — Իմացէ՛ք, ընկերներ, այն բանաստեղծութիւնը զոր կարգաց ձեզ ակումբին մէջ անցեալ օր, Ֆրանսացի հանձարեղ բանաստեղծի մը քերթուածին թարգմանութիւնն էր . . . :

Ս. — Ես քու բոլոր բանաստեղծութիւններուդ աղբիւրը քաջ գիտեմ :

ԼՈՒՍԻ. — Աստուած իմ, ի՞նչ կը լսեմ, ի՞նչ զարհուրելի մերկացումներ են ասոնք . . . Ի՞նչ գուեհիկ վերագրումներ, դուք պարոններ, բոլորդ ալ կեղծ տաղանգներ էք :

Վ. — Ձեր բոլոր բանագողութիւններուն մասին այսօր ընդարձակ յօդուած մը պիտի խմբագրեմ և գաղութահայ բոլոր թերթերու խմբագրութեանց պիտի զրկեմ :

### ՏԵՍԻԼ ՏԱՍՆԸԵՐԿՐՈՐԴ

#### ՆՈՅՆՔ ԵՒ ԼԵՒՈՆ

ՊԵՐՃ (Մեկուսի). — Այս ինչո՞ւ եկաւ դարձեալ :

ԼՈՒՍԻ. — Պր՛. Լեւոն, ուրախ եմ որ վերագարձաք. այս պարոնները քինախնդրութեամբ լարուած զիրար կ'ամբաստանեն և կը վախնամ որ իրենց այս վէճը տխուր միջադէպի մը յանգի. պիտի խընդրեմ որ դուք իսկոյն հաշտեցնէք զանոնք . . . :

ԼԵՒՈՆ. — Բայց ի՞նչ պատահեցաւ . . . :

Վ. (Պերճը ցոյց տալով). — Այս պարոնը ինձի տգէտ անուանեց, դուք ըսէք՝ ես տգէ՞տ եմ :

Պ. — Ես իմաստակ եմ որ զիս այդպէս կը կոչեն :

ՍԻՄՈՆ. — Ես ե՞րբ բանագողութիւն ըրած եմ որ աներեսօտար կը յանդգնին զիս բանագող կոչել :

ՋԱՐԵՅ (Վահանը ցոյց տալով). — Ի՞նչ իրաւունքով կը համարձակի լըրճել իմ գրական տաղանգս . . . :

Պ. — Իմ քերթողական ձիրքերս . . . :

Ս. — Իմ հազուագիւտ գրական յատկութիւններս . . . :

Պ. (Վահանը ցոյց տալով). — Այս տխմարը իմ բոլոր գրութիւններս ի՞նչ իրաւունքով այլոց սեփականութիւն կը հռչակէ . . . :

Վ. — Տխմարը դուն ես, լի՛րբ :

ԼՈՒՍԻ. — Ո՛հ, աւելի երկար չեմ կրնար մնալ այստեղ, Պրն. Լեւոն՝ պիտի խնդրեմ որ բարի ըլլաք ինձի ընկերանալ մինչև տունս :

Լեւոն. — Ամենայն սիրով . . . :

Պ. (Վահագնի լրայ խոժելով). — Ինչպէ՞ս, դո՛ւք զիս կ'ամբաստանէ՞ք . . . կը վարկարեկէ՞ք . . . :

Վ. — Ձեր սպառնալիքէն վախցող մէկը չեմ. կը հրամայեմ որ իսկոյն ետ քաշուիք :

Լեւոն. — Հետեւեցէք ինձի Օրիորդ, այս իմաստակները վիճարանութեան արդէն իսկ վտանգաւոր կերպարանք տուին . . . :

ԼՈՒՍԻ. — Ո՛հ, հիմա կը հասկնամ որ այս ապուշները գրականութեան յիմարներ են : (Լեւոնի ընկերակցութեամբ դուրս կ'ելլեն ճակատի դռնէն) :

Վ. — Ես կը մեկնիմ. բայց չպիտի մոռնամ հրապարակել քու բոլոր բանագողութիւններդ :

Ս. (Պերճի). — Ի՛նչ միամտութիւն . . . քանի մը անիմաստ քերթուածներ շարագրելով. յաւակնիլ թէ աշխարհի մեծագոյն բանաստեղծը պիտի ըլլաք ապագային . . . :

Պ. — Կորսուէ՛, իմաստա՛կ : (Սուրեն կը մեկնի) :

Չ. (Պերճի). — Մեկնելէս առաջ կը փափաքիմ վերջին թելագրանք մը ընել ձեզի . . . չըլլայ որ յետ այսու ձեր բարեկամներուն գովեստի և հիացման արտայայտութիւններէն փքանալով, մեծամոլութեան յիմարութիւնէ բռնուիք . . . մնաք բարով : (Դուրս կ'ելլի) :

Պ. — Ափսո՞ս. կը ցաւիմ որ այսքան ժամանակ միամիտ գտնուեցայ հաւատալու այս իմաստակներուն խաբեպատիր գովեստներուն . . . հիմա կը հասկընամ որ բոլորն ալ կե՛ղծ ՏԱՂԱՆԴՆՆԵՐ են եղեր : (Աջակողմեան դռնէն դուրս կ'ելլի) :

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



«Ազգային գրադարան»



NL0372147

58847